

ՔՍԱՆ ՎԵՏԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшахъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՎԱՅ 1899 ԹԻՎԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(27-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի: ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ ե ռ ի կ ա յ ի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Ս լ ը ու պ ա յ ի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պ ա ռ ս կ ա ս տ ա ն ի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԿԱՍԱՆԸ (Բաղրամյան և Բարձրակայա փողոցների անկիւն): Կայսրութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գրումը հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАХЪ“, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Յայտարարութիւններ ընդունվում են ըստ լիզուների:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն 2 Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

Այլ էքստրադր Նիկիտի և Իւլիա Միխայլովնա Թայրոօվները յայտարարում են՝ ազգականներին, բարեկամներին և ծանօթներին, որ հիշադրելի, զեկտեմբերի 3-ին, իրանց անժամանակ մահացած թանկագին և անմոռանալի աղջկայ՝

ՕՐ. ՄԱՐԻԱ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՆԱ ԹԱՅԻՐՈՎԻ

մահվան տարեգրծի օրը, Դիդուբնի եկեղեցում, պատարագից յետոյ, ժամը 12-ին, հողեհանդիսութիւն կը կատարվի հանգուցեալի գերեզմանի վրա:

1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժամանակաւոր և հիմնական միջոցներ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դատարանական դատարանից, Ներք կը հասկանան. Մատենադարանից, Հայոց ներկայացումները Բազում. Նամակ Ներքին-Արտաքին. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՍԱՀ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳՐՈՒՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անպատասխան ժողովուրդ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՊԱՏՐԱՍ ԺՈՂՈՎՈՐԻ

(Նամակ դաւանելից)

II

Առաջին անգամը չէ, որ մեր երկրում հացի խնդրը տագնապ է առաջացնում, որից օգտվում են փողաւոր Հայրենները, լինելով աւելի փորձառու. տուժող ժողովուրդն է, և որովհետեւ հացի այժմեան տագնապը վերջինը չը պիտի լինի, այլ կրկնվելու է հէնց եկող աշնանը, ուստի ապագայ դժուարութիւնների առաջն առած լինելու համար, այժմից առաջարկում ենք այն միջոցները, որոնց օգտակար և գործնական լինելու մասին ոչ մի կասկած չունենք. — Եթէ հողատէր և երկրագործ գիւղացիների համար անհրաժեշտ պահանջ է դառնում հասարակական շտեմարան ունենալը, որը, սակայն, մեր երկրում կանոնաւոր հիմքերի վրա չէ դրված, այլ նրա անունով փող է ժողովում և դանձարանին պահ տրվում, ապա որքան կարելի կայ քաղաքացիներին շտեմարան ունենալ, որը Նրեան քաղաքը կարող է հիմնել առանց մեծ դժուարութիւնների:

Նրեան քաղաքը ունի 1193 գետնատին հող,

ԺԱՄԱՆԱԿԱՆՈՐ ԵՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Անցեալ անգամ մենք խօսեցինք Կովկասի աւազակութիւնների արտադրող հիմնական պատճառների մասին: Մի քանի խօսք ևս ասեմք աւազակութիւնների զարգացման նպաստող պայմանների մասին: Նրկու զլխաւոր պայմաններ կան. դատարարական ռեժիմը, որովհետեւ փախուսող Սիբիրից և զիւղական ազգաբնակչութեան պատասխանութիւնը: Վիճակագրական տեղեկութիւն-

որը կապալով է տրվում զանազան անձանց: Սկզբներում այդ հողի կապալագինը երկու հազար ռուբլուց չէր անցնում, իսկ այժմ, ինչպէս ըստ մեր, 14,000 ռուբլու է հասել: Եթէ մասնաւոր մարդը երկու հազար ռուբլի կապալով տրվող հողին վտանգանում է 14 հազար ռուբլի տալ, դա ապացոյց է, որ հողը պիտանի, շահաբեր է, որովհետեւ վաճառականը եթէ 4—5 հազար ռուբլու օգուտ ի նկատի չունենայ, այդքան մեծ գումար չի պարապեցնի երկար տարիներ անօգուտ ձեռնարկութիւնների վրա: Որքան մեղ յայտնի է, կապալաւորները երբեք անձամբ չեն մշակում քաղաքապետական հողը, այլ տալիս են գիւղացիներին կիսաբար ցանկացնելու: Միթէ քաղաքային վարչութիւնը չէ կարող վարվել նոյն հիմքերի վրա, որպէս վարվում են կապալաւորները: Այդպէս վարվելով, քաղաքը կունենայ իր սեփական հացը, դուրս կը բերի շուկայ և նոյն իսկ սեփական փողեր բացանելով վերջ կը տայ Մաշալի հացավաճառների կամայականութեանը: Դուք սրան պատասխանողներ լինեմ, թէ դա վտանգաւոր բիսի է քաղաքի կողմից, որովհետեւ եթէ մի տարի անբերրութիւնից ցանքը վնասվի, քաղաքը կը զրկվի 14 հազար ռուբլի հաստատ եկամուտից. և քաղաքը դրանից քաղաքը աւելորդ գումար պէտք է ունենայ սերմացուի համար, իսկ դա ներկայումս անկարելի է. կայ և այն, որ հացաբոյսերի գին-

ները ցոյց են տալիս, որ ամեն տարի Սիբիրից և տաճնակիր աշխատանքից փախուցում են բաւական թւով դատապարտվածներ և այդ փախածները, վերադառնալով իրանց ծննդավայրերը, կազմում են աւազակային խմբեր ու հրոսակներ: Աստիկանութիւնը յաճախ անգոր է լինում հայա-ծել այդ խմբերը և կռուել նրանց դէմ, որովհետեւ զիւղերը ապաստան են ընծայում նրանց ու պատասխարում: Իսկ գիւղացիները պատասխարում են աւազակներին այն պատճառով, որ դառն փորձով գիտեն, թէ հակառակ դէպքում, կենթարկվեն ամենամեծ վտանգների. նրանք՝ այդ գիւղացիները, անգոր են պաշտպանել իրանց, որովհետեւ անպէս են և ոստիկանութիւնը շատ հեռու է իրանցից: Այնտեղ, ուր ազգաբնակչութիւնը զինված է, կամ ինքնապաշտպանութեան աւելի նըպաստաւոր պայմանների մէջ է գտնվում, աւազակները գործունէութեան որ և է ասպարէզ չեն գտնում: Տեղական ոստիկանութիւնը իր այժմեան կազմակերպութեամբ ոչ մի հնարաւորութիւն չունի տալ ազգաբնակչութեան այն պաշտպանութիւնը, որին նա կարօտ է: Այն օրը, երբ գիւղացին համոզվեց, թէ հալածելով աւազակին, ինքը և իր արտը, այգին, տունը չեն ենթարկվի աւազակի անխնայ յարձակումներին, այն օրը ոչ մի աւազակ ապաստան և պատասխարութիւն չի գտնի ոչ մի զիւղում: Մենք աւելին կասեմք. եթէ ինքը գիւղական ազգաբնակչութիւնը ունենայ ինքնապաշտպանութեան միջոցներ, նա առանց ոստիկանութեան օգնութեան էլ կը պաշտպանի իրան և անխնայ կը հալածի աւազակներին:

Աւերմի աւազակութիւնները դէմ կռուելու անմիջական միջոցները առ այժմ այն են, որ թող չը տրվի դատապարտված ռճրադրներին փախել Սիբիրից, իսկ այն տեղերում, ուր աւազակութիւնները զարգացած են, ազգաբնակչութեան ինքնապաշտպանութեան հնարաւորութիւն տրվի: Այդ միջոցները, մեր կարծիքով, մեծապէս կը նպաստեն աւազակութիւնների նուազման, որովհետեւ աւազակները կը զրկվեն այն նպաստաւոր հողից, որը նրանց սնունդը և զարգացումն է տալիս: Այդ անմիջական և ժամանակաւոր ընաւորութիւն ունեցող միջոցների հետ միասին պէտք է տարածել հետեւողական կերպով, քայլ առ քայլ կրթութիւնը և գիւղաւորապէս պրո-

րը կարող են յանկարծ ընկնել, որից քաղաքը նիւթականապէս կը վնասվի:

Հարեանցօրէն դատելով իսկապէս այդ բոլորը կարող է երկու-դալի թաւ, սակայն իրականութեան մէջ, կապալաւորութեան ամբողջ ժամանակում մենք այդպիսի երկու չենք տեսնել: Այդ կասկածներն անհիմն են քաղաքապետական յիշեալ հողերի վերաբերմամբ հետեւեալ պատճառներով: 1) Քաղաքապետական հողերը ջրաբեր լի-նելով մեծ ապահովութիւն ունեն ցանքաբուր-թեան տեսակետից անբերրութեան դէմ: Պէտք է ունենալ միայն բարեխիղճ և փորձված մարդ՝ գործ կատարելու համար. այժմ նշանակված կան նախնադական և զաւառական գիւղատնտեսներ, որոնց ղեկավարութեամբ կարելի է կանոնաւոր գործ կատարել: 2) Յամենայն դէպս եթէ տեղի ունենայ անբերրութիւն այլ պատճառներով, չը պէտք է կարծել, թէ հողը ոչինչ չի տալ, այլ բերել բանակութիւնը միայն պակաս կը լինի, ինչպէս հէնց այս տարի. այդպիսի դէպքերում պտղի արժէքը բարձրանում է, ծածկում է ծախսը և մի բան էլ աւելի է մնում. ուրեմն այդ դէպքում էլ փողի հաշիւով քաղաքը կորուստ չի ունենայ: 3) Այն էլ պէտք է նկատի ունենալ, որ եթէ հողը մի երկու տարի սակաւ բերք տալով վնաս է պատճառում ցանքաբուր, անմիջապէս դրան յաջորդում է այնպիսի առատ տարի, որ առատ բերքի բանակութիւնից մի թիւթարվում է ցանքաբուրը կիսաբար ընկնելու համար: 4) Յամեն կիսաբար կատարելով քաղաքը ազատ կը լինի նշանաւոր ծախսեր անելուց, որովհետեւ աշխատութիւնը—վարելը, ջրելը, կախելը գիւղացին առհասարակ իր վրա է ընդունում. մընում է սերմը, որ տալիս է հողատէրը, ապագայ բերքից վերցնելու պայմանով. այդ էլ դժուար չի լինի քաղաքի կողմից տալը, ի նկատի ունենալով Պետական և Առեւտրական բանկերի գոյութիւնը Նրեանում: 5) Անցան այն երանելի ժամանակները, երբ մեր երկրում ցարենի խալվարը ծախվում էր 4—10 ռուբլով և այժմ չը կայ այն վախը, թէ հացաբոյսի գինը յանկարծ ընկնելով քաղաքը կարող է վնասվել այդ ձեռնարկութիւնից. վաղուց է, որ մենք այդպիսի դնք չենք տեսնել և հալիւ թէ կրկին անգամ տեսնենք:

Նորից ստիպված ենք կրկին մեր նախորդ թղթակցութեան մէջ սառածները, որ այս տարվայ թանկութիւնը ոչ թէ անբերրութիւնից է, այլ գիւղաւորապէս նրանից, որ ժողովուրդը կամաց-կամաց պակասեցնում է այն տարածութիւնը, որի վրա առաջ հացաբոյս էր մշակվում: Համեմատեցե՛ք բաժնակի այժմեան պլանտացիաների տարածութիւնը 15—20 տարի առաջ եղած տարածութեան հետ: Ներկայ կը լինէր, եթէ մենք մի առ մի թելինք այն պատճառները, որոնք ստիպում են Նրեանի նախնադի դաշտաբնակ ժողովրդին պակասեցնել հացա-

Ֆեւսեոնալ կրթութիւնը նաեւ մահմեդական ազգաբնակչութեան մէջ: Դործադրելով մի կողմից ժամանակաւոր միջոցները, որոնք նեղ սահմանի մէջ կը շրջափակեն աւազակութիւնները, իսկ միւս կողմից արմատական միջոցները, որոնք յեղաշրջելով ազգաբնակչութեան հասկացողութիւնը աւազակութեան և «լոյսաւորութեան» մասին, հետզհետէ առաջ կը բերեն մի սերունդ, որ կը ստիպի իր սեփական աշխատանքով ապրել և կը կորցնէ ուրիշ սեփականութիւնը լայնու սէրը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՏԱՍԱՀԱԿԱՆ ԴԱՀԻՃԻՑ

Դեկտեմբերի 1-ին, Թիֆլիսի նախնադական դատարանի 2-րդ բրէժական բաժանմունքը ընդհան. Տիգրանեանի գործը, որը մեղադրվում էր Թիֆլիսի քաղաքապետ Պ. Նախագիւղին խօսքով վիրաւորանք հասցնելու համար: Նախագահում էր դատարանի նախագահ Շարիֆին. անդամներն էին Բօլիւրիճ և պատուաւոր հաշտարար դատարար Բուտիրիկին. մեղադրվում էր պրօկուրոր օգնական Կրասովսկի. մեղադրվողն ինքն էր պաշտպանում իրան:

Նիստը բացվեց ժամը 10¹/₂-ին: Մեղադրողի կողմից իբրեւ վկաներ կանչված էին ճարտարներ Ա. Յովհաննիսեան, Յ. Ալիխանով, Կ. Ալիխանով և քաղաքապետ Նախագիւղի Մեղադրվողի կողմից առաջարկված վկաների դատարանը դեռ սեպտեմբերի 30-ի Նիստում մերժել էր կանչելու: Կարգացվեց մեղադրական ակտը, որից երևաց, որ Ն. Տիգրանեան դատի է ենթարկված պատժական օրէնագրերի 282-րդ յօդուածի հիման վրա, այն է՝ որ նա պաշտօնական ատենում անքաղաքակցի խօսքերով վիրաւորանք է հասցրել պաշտօնական անձի:

Նախագահ, դիմելով Տիգրանեանին, հարցնում է. — Մեղադրվող, ճանաչում է՞ք ձեզ մեղաւոր, որ 1898 թ. յունիսի 15-ին, Թիֆլիսի դոմայի նիստում, դուք արտասանեցիք նախագահող Նախագիւղին հասցնելու այս անքաղաքակցի խօսքերը. «Միջոցում եմ ձեզ նօտացիւններ չը կարդալ. ես ձեզանից աւելի լաւ նօտացիւններ կը կարդայեմ, և՛ «ես ձեզ այնքան ընչ եմ յարգում, որ իմ ձեռքով հաշտարարութեամբ ձեզ անքաղաքակցի պիտի ժողովնեմ, որ տեղի է ունենում ձեր նախագահութեամբ»:

Տիգրանեան. — Այո, ես արտասանել եմ այդ խօսքերը, բայց, ինչպես եմ ի նկատի ունենալ, թէ ինչ հանգամանքներում արտասանեցի. ես այդ յետոյ կը բացատրեմ:

է ցանքաբուր և մոռանում նախկին ցաւը: 4) Յամեն կիսաբար կատարելով քաղաքը ազատ կը լինի նշանաւոր ծախսեր անելուց, որովհետեւ աշխատութիւնը—վարելը, ջրելը, կախելը գիւղացին առհասարակ իր վրա է ընդունում. մընում է սերմը, որ տալիս է հողատէրը, ապագայ բերքից վերցնելու պայմանով. այդ էլ դժուար չի լինի քաղաքի կողմից տալը, ի նկատի ունենալով Պետական և Առեւտրական բանկերի գոյութիւնը Նրեանում: 5) Անցան այն երանելի ժամանակները, երբ մեր երկրում ցարենի խալվարը ծախվում էր 4—10 ռուբլով և այժմ չը կայ այն վախը, թէ հացաբոյսի գինը յանկարծ ընկնելով քաղաքը կարող է վնասվել այդ ձեռնարկութիւնից. վաղուց է, որ մենք այդպիսի դնք չենք տեսնել և հալիւ թէ կրկին անգամ տեսնենք:

Նորից ստիպված ենք կրկին մեր նախորդ թղթակցութեան մէջ սառածները, որ այս տարվայ թանկութիւնը ոչ թէ անբերրութիւնից է, այլ գիւղաւորապէս նրանից, որ ժողովուրդը կամաց-կամաց պակասեցնում է այն տարածութիւնը, որի վրա առաջ հացաբոյս էր մշակվում: Համեմատեցե՛ք բաժնակի այժմեան պլանտացիաների տարածութիւնը 15—20 տարի առաջ եղած տարածութեան հետ: Ներկայ կը լինէր, եթէ մենք մի առ մի թելինք այն պատճառները, որոնք ստիպում են Նրեանի նախնադի դաշտաբնակ ժողովրդին պակասեցնել հացա-

Յուդ. Խօջաէյնաթեան.

ջերքով են կապված նրա հետ, այդ բոլորը մոռնալ է և անբացատրելի: Մասնաճյուղ անբացատրելի է մնում մի անձնաւորութիւն—պատաւախտարարութիւն Ալեքսանդրի տիպը, որը ներկայացնում է մի անհասկանալի հրէշ, չարիքի կենդանի մարմնացում, որը առանց բացատրելի շարժառիթների դարձուբերելու աւերիչ դեր է կատարում իր շուրջը: Նրանց բոլորին աւելի շուտով կարելի է համարել ակնարկներ տիպերի մասին, քան թէ իսկական տիպեր:

Գրքամայի խաղը բաւականին լաւ անցաւ, և հետաքրքիր էր այն կողմից, որ օրերով Վարդի-թեր (Ֆելեկեան) Նյույորքի դերուժ նորից ապացուցեց, թէ իր դերասանական ընդունակութիւնների մէջ կարող է առաջադիմել—մի դեղնեղիկ դրամական բեմին նուիրված մարդու ապագայի հոմար: Բայց մի և նոյն ժամանակ ցոյց տուեց և այն, թէ որոշ, կեղծ-դերասանական ձևերից միանգամայն ազատվել անկարող է: Այդ պակասութիւնը օրերով միմիկայի չափաւորութիւնն է, մասնաւոր պարանոցի չափաւոր ձգձգումները, չթուանքների նոյնպէս սղծելը, մասամբ և աչքերի արտայայտութեան չափաւորութիւնները: Չնայած նա իր խաղին Միլիւն օրերով դէմքը, ձայնը, հայեացքը ընդունակ են բնական ձևերով և բնական սահմանի մէջ արտայայտել թէ՛ դրամատիկ, զգացմունքների բնութիւններ, և թէ՛ վիշտ և հոգու տանջանքներ: Բայց նա իր անկասկածելի բնատուր դերասանական ձևերը վտանգել է կեղծ չեղարկի ազդեցութեան տակ, այնքան, որ նոյն իսկ դժուար է ճիշդ չափով չափել նրա դերասանական ընդունակութիւնները: Պ. Արէլեան վաճառական Նյույորքի դերուժ ձգտում էր բուն ռուս տիպը ձգտորէն ներկայացնել և յայտնի չափով իր նպատակին հասնալ, միայն շատ էր չեղում աչք տիպի կողմ գծերի վրա: Ֆելեկեան օրով դերը հազիւ թէ յարմար էր պ. Տէր-Գաւթեանի ամպլուային, դրանով պիտի բացատրել, որ նրա խաղը սովորական տպագրութիւնը չէր թողնէ: Պ. Ալեքսանդրի վրա էր Միլիւն դերուժ, երկուստեք դերասանը առաջադիմելու նշաններ է ցոյց տալիս և պէտք է յուսալ, որ նա խմբի անդամների մի քանիների նման կանգնի առնելու մի կէտի վրա: Տիկին Միլիւնեան գոհացուցիչ կերպով կատարեց Նեղեղայի դերը: Վատ էր իր դերում օրերով Վարդուհի (Ալինա), թէև նա աւելի ներկայացնում էր հայ բան թէ ռուս պառաւ աղախին, որը որոշ խօսքերով և շարժումներով ունի: Օրերով Մարի-Հրանդ (Միլիսկա) իր կոմիկով հետաքրքրութիւններ ներշնչեց իր փոքրիկ դերին, բայց ըստ սովորութեան ձգտում էր՝ չափից և սահմանից դուրս գալ:

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱԽՏԱՑԻՑ

Նոյեմբերի 20-ին

Արանից մի քանի շաբաթ առաջ մեծ աղմուկով տեղի ունեցաւ Ներքին-Ախտայի հայ հասարակութեան դալավայի ընտրութիւնը, որի վարչութեան տրամադրութեան տակ է գտնուում 6—7 դիւղերի ժողովուրդը՝ մօտ 1000 անդամ: Առաջարկված մի քանի թեկնածուներից, դադարեց Քուէրիկութեանը, ձայների մեծամասնութիւն շահեցին Յովհաննէս Գրիգորեան և Յակոբ Գալստեան, երկուսն էլ երկտասարդ, կիսա-խնուր զինուորականներ: Առաջինը ձայների առաւելութիւն ստանալով որոշվեց իբրև գալավա, իսկ վերջինը՝ կանդիդատ: Զը նայած, որ մինչև այսօր բաւական ժամանակ է անցել ընտրութեան օրից և ժողովուրդը անդադար սպասում է, որ նախնազգիները հաստատեն նորընտիր գալավայի ընտրութիւնը, սակայն դեռ ևս հաստատելու հրաման չէ ստացվել: Միմիկայով է, որ ինչ-ինչ պատճառներով գալավայի փոխարէն գուցէ կանդիդատին հաստատեն:

Մեզ համար այնքան հետաքրքիր չէ թէ դրանցից որը կը լինի գալավան, բայց աւելի հետաքրքիրն այն է, որ այդ պաշտօնի համար շատերը գլուխ են պատռում և միջից կէս են լինում և աշխատում՝ ինչ միջոցներով էլ լինի, ձեռք բերել այդ պաշտօնը, նախ դանդաղան խոստումներ տալով հասարակութեան նրա կեանքի բարեկալութեան վերաբերմամբ: Բայց երբ ստանձնում են այդ «ձեռնուռ» պաշտօնը և մտնում են իրանց դերի մէջ, այդ գալավանները կամ հասարակութեան զլխաւոր տանուտէրները, մոռանալով իրանց խոստումները և հասարակական գործիչ պարտաւորութիւնները, սկսում են միայն մտածել իրանց գրպանի օգտին, ծառայեցնելով իրանց կապրիզներին հասարակութեան շահերը...

Կասկած չը կայ, որ ընդհանրապէս հասարակութեան գալավանները գիւղական շրջաններում մեծ գործ կարող են կատարել յօգուտ իրանց

ստորադրեալ ժողովրդի, եթէ նրանք խելացի և անչառաւք լինեն, և այդ պատճառով նրանցին շատ բան է պահանջվում: Վերջ յիշած պարոնները ըստ երևոյթին համակերել անձնաւորութիւններ են: Բայց թէ՛ ճիշդիս անաշուու-թեամբ և դիտակցութեամբ առաջ կը տանեն իրանց գործը, այդ ցոյց կը տայ մօտ ապագան: Սակայն ուրախ կը լինէինք, եթէ նրանցից մէկն ու մէկը, երբ կը մտնի իր պաշտօնի մէջ, արդարացիորէն ժողովրդի յօյսը, որ տաժում է առհասարակ դէպի գալավան, որից շատ բան է կախված՝ հասարակական կեանքի թերութիւնները կազմի բերելու նկատմամբ: Ուրախ կը լինէինք նաև, եթէ Ներքին-Ախտայի նորընտիր գալավան իր պաշտօնավարութեան ընթացքում տեղի չը տար իր գործունէութեան թիւյլ կողմերը հրապարակ հանելու... Թող լաւ հասկանանք, որ այժմ ժողովուրդը առաջվայ յիմարէն, այժմ նա շատ չգոհատ է և վայ այն հասարակութեան պաշտօնակալին, որը կը յանդիման չարը գործ դնել ժողովրդի հաւատարմութիւնը...

Գ. Սիւնանանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, նոյեմբերի 28-ին

Հայրենաց Բարեգործական Ընկերութեան վարչութիւնը խնդրում է հետեւեալ երկուսը գեներալ Վաչագի մէջ: Մնչպէս շատ են, զանազան անձնաւորութիւններ չըբլով աները՝ Հայրենաց բարեգործական Ընկերութեան վարչութիւնն անունով փող են հաւաքում, որպէս թէ յօգուտ Ընկերութեան: Վարչութիւնս իր բարոյական պարտքն է համարում յայտնելու և զգուշացնելու հասարակութեանը, որ ինքը երբեք մտադրութիւն չէ ունեցել այդ միջոցին դիմելու և որ յիշեալ անձինքները կողմից այդպիսի արարքը ուղղակի խաբեբայութիւն է:

Ատենայետուհի՝ Հ. Ա. Սիւնանցիւհան Անդամ-ատենայետուհի՝ Նր. Յովհաննէսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մնչպէս յայտնի է, Բարձրագոյն հրամանով մի տարի ժամանակամիջոց էր տրված Թիւրքիայից փախած հայ գաղթականներին և իր վերադառնալու իրանց հայրենիք: Մի քանի ամսից յետոյ կը վերջանայ այդ ժամանակամիջոցը: Այլից առաջ ունենալով այդ հանգամանքը, Թիֆլիսի օստիկանութիւնը ցուցակագրում է այստեղ գտնվող գաղթականներին և միջոցներ է ձեռք առնում Բարձրագոյն հրամանը կատար անելու: Որոշված է գաղթականներին տալ հարկատու ճանապարհահամար: Գաղթականները Թիւրքիայի հողը մտնելուց կարող են դիմել ռուսաց հիւպատոսներին այն դէպքում, եթէ պահանջ զգացվի դիւրութիւններ ստանալու երկրի խղճերը գնալու համար: Նպատակադարձ էր գաղթականներին համար ուղեւորվել իրանց երկիրը խմբերով, որովհետև այդպիսով հեշտանում է թէ՛ հիւպատոսների և թէ՛ ուրիշ իշխանութիւնների հետ գրագրութիւնն ու բանակցութիւնը և ուրեմն աւելի ապահովված կը լինի գաղթականների ուղևորութիւնը:

Թիֆլիսում տեղի ունեցած վերջին հեղեղների առիթով ժողոված գումարը, ինչպէս յայտնվեց բաղադրային դուստր վերջին նիստում, գործադրված է հետեւեալ ձևով: Ընդամենը ժողոված էր 2397 ռուբլի, որոնցից 1000 ռուբլի տուել է բաղադր, իսկ մնացածը գոյացել է նուիրատու-թիւններից և ներկայացումից: Այդ գումարը բաժանված է 241 անձի մէջ, որոնց մէջ եղել են թէ՛ 2—3—5 ռուբլի և թէ՛ մինչև 100 ռուբլի ստացողներ: Գաղաբային դուստր բացի դրանից ներք է այն տանտէրերի ապառիկները, որոնք վնասվել են հեղեղներից:

Մեր ընթերցողներին յայտնի է, որ երկու տարի սրանից առաջ կազմվեց Գորու գաւառում կարուածառէրերի մի ընկերութիւն, որի նպատակն էր ընկերակցական ոյժով օգնել միմեանց ձեռք բերելու է մաս առարկաներ իրանց կալուածների համար և ձեռնուռ պայմաններով վաճառահանել կարուածներն արդիւնները: Փորձը շատ աջող եղաւ: Ընկերութիւնն ունենալով իր ձեռքին 3000 ռուբլի գումար, կարողացաւ առաջին տարին շրջանադարձութիւն կատարել 80,000 ռուբլու, իսկ երկրորդ տարին որ դեռ չէ վերջացած, ևս աւելի: Ընկերութիւնը տուել է իր բաժնէտէրերին 80% զուտ արդիւնք: Անդամ էր դրվել կարող են և ուրիշ գաւառների գիւղատնտեսներ:

ՄԵԼԻՏՈՊՈԼԻՑ մեզ գրում են նոյեմբերի 23-ից: Այսօր այցելեցին տեղիս հայոց դպրոցը մեր նախնային ժողովրդական դպրոցների դիմելու

տօր Գ. Գեակոնով և մեր դատուի ժողովրդական դպրոցների տեսուչ Մարտինովի: Լսեցին իրօնի և հայոց լեզուի դասերը Պ. Գեակոնով անձամբ ընկեց աշակերտներին ռուսաց լեզուից և թուրքերէնի: Զը նայելով, որ թուրքերէնի դասերը դպրոցում աւանդվում են հայոց լեզուով, աշակերտներն այդ առարկայից շատ բաւարար կերպով պատասխանեցին ռուսերէն: Պ. Գեակոնով շատ զոհ մնաց աշակերտների պատասխանները: Նւ առհասարակ Տաւրիկեան նահանգի հայոց դպրոցները պ. դիրեկտորի վրա լաւ տպագրութիւն պէտք է թողած լինեն, որովհետև աշակերտներին ընկելուց յետոյ, դիմելով պ. Մարտինովիչին ասաց, որ հայոց դպրոցներում դասաւանդվելու շատ լուրջ հիմքերի վրա է դրված: Յետոյ պ. Գեակոնով յայտնեց, որ սրանից յետոյ բոլոր առարկաները, բացի կրօնից և հայոց լեզուից, պէտք է աւանդվեն ռուսաց լեզուով, աշակերտներին պէտք է սովորեցնել Կայսերական օրհներգը, պէտք լիւնան Թագաւոր Կայսրի, Կայսրուհու և Թագաւորուհու տիտղոսները, և պէտք է՝ դասերը սկսվելուց առաջ և վերջանալուց յետոյ, ասեն նախ աղօթք հայոց լեզուով և յետոյ երգեն՝ «Спаси Топеода...» աղօթքը ռուսաց լեզուով:

ԳԻԼԻՉԱՆԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 26-ին, ցերեկվայ ժամը 2-ից ամբողջ Իրիշխան օտի վրա էր և մեծ իրարանցման մէջ. վառվում էին եղբայր Ա. և Ս. Գաւթեանների խոտի հանգին: Դէղերը ձրգինք առաջացել էր անդուշտութիւնը: Օգնութեան հասնողները աշխատում էին միայն քանդած հողով ձրգինք առաջն առնել, որ և այդ նպատակին հասն նրանք, շնորհիւ քամու բացակայութեան:

ՍՂԱՆԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 22-ին Թէլաւի գործակալ Գեորգ քահանայ Տէր-Սարգսեանի նախադասութեամբ՝ կայացաւ ս. Գեորգ եկեղեցու ծխականների ժողովը՝ քահանայական հարցը լուծելու համար: Ժողովին ներկայ էին մօտ երեք տասնեակ մարդ: Գործակալ յայտնեց ժողովին կոնսիստորիայի կարգադրութիւնը՝ ստուգել թէ յիշաւ ծխականները ցանկանում են նոր քահանայ թէ ոչ: Ժողովականները տուեցին դրական պատասխան և կազմվեց արձանագրութիւն ներքի գտնվողներին ստորագրութեամբ: Կարգադրվեց նոյնպէս նոյն եկեղեցու երէցիով Գ. Տէր-Սարգսեանի կոնսիստորիային ուղղված հաղորդագրութիւնը, որով նա կարիք չէր գրում նոր քահանայի, պատճառաբանելով եկեղեցու արդիւնքի պակասութիւնը: Նկրք, կոնսիստորիան անցնելու տարի մերժել էր ծխականների խնդրը, սակայն իրան յատուկ փոփոխմամբ թեամբ, քանդել է այժմ իր վիճուր: Նրեաց, որ ծխականների սկզբունքը ոչ թէ քահանայի պահովութիւնն է, այլ այն, թէ որքան շատ տէրտէր լինի, այնքան ժամանացութիւնը փառաւոր կը լինի... Կարծում ենք, որ կոնսիստորիան կարող է բաւարարութիւն տալ տէրտէր սիրող սղանդիկներին, ուղարկելով ս. Կարապետ եկեղեցուց մի քահանայ, քանի որ նոր քահանայի կարիք չը կայ: Ժողովը ծիծաղելի դարձաւ, երբ նախագահն սկսեց կարգադր քահանայի բողոքը, որ իբր թէ քահանայութեան բարեկամներն ուղում են նրան թուաւորել: Զարմանալի է, որ հոգևոր իշխանութիւնը այդ բողոքն առաջարկել էր ժողովի ըննութեան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՐՔԻԱՑԻՑ

Վ. ան, նոյեմբերի 18-ին

Գերմանացի հնախոյզ դոքտոր Բէլքն և իր ընկերն երկու ամիս աւելի հոս կը դառնան. և այս կարճ ժամանակուայ ընթացքին այնքան առատ տեղեկութիւններ հաւաքած, այնքան բազմաթիւ արձանագրութիւններ, բնեւորներ գտած և այնքան հնութիւններ դուրս հանած են, որ մինչև այժմ եկող և ոչ մի հնախոյզ չէ կրցեր ասոնց նման օգտուիլ: Արտօնուած լինելով թիւրք կառավարութեան կողմանէ, ազատ օրէն կրցան իրենց բոլոր ուղած տեղերը բանդել, ու արձանագրութիւններ և հնութիւններ ձեռք բերել. ասոնց յանդուգն ձեռնարկութիւն մ'ալ այն եղաւ, որ բաղադրմէլ գտնուող թիւրքաց մզկիթի մը յատակի բարերը քանդելով, կարգ մը բնեւորներ ու հայերէն արձանագրութիւններ գտան: Գտնուեցան այնպիսի արձանագրութիւններ, որոցմէ յայտնուեցաւ թէ սոյն մզկիթի ամբողջ քարէ սիւներն ու տաշուած մարմար քարերն մաս մը վերին Վարապէն ու մաս մ'ալ Աղթամարէն բերուած են: Տապանաքար մը գտնուեցաւ, որ 570 տարի առաջուայ Աղթամարի խաչատուր կաթողիկոսինն էր. տապանա-

քարի վրայ գեղեցիկ կերպով քանդակուած էր յիշեալ կաթողիկոսի պատկերը: Թիւրք ժողովուրդը սոյն պեղման առթիւ ուղեց ցոյցեր ընել կառավարութեան դէմ, բայց անմիջապէս ցրուեցաւ օստիկանների միջոցաւ:

Ասկից դատ պեղել տուին նաև Զրմըրմ Մադարայ բուռած տեղը, ուր արդէն քանդակների հնախոյզներ պեղել տուած էին, ու չէին կրցած ասոնց չափ հնութիւններ ձեռք բերել. այս տեղէն դուրս հանեցին զանազան տեսակ հողէ, պղնձէ կուռքեր, զանազան ձևերով ամաններ, մի ոսկեայ բուռվար մը զանազան ակներով դարգարուած, քանի մը ոսկեայ դրամներ, ու կարգ մ'ալ արձանագրութիւններ, պեղումն դուրս կը շարունակուի. պեղել կուտան նաև Կարմրաւոր վանքի քով գտնուող բլուր մը, ուր ցարդ գտած են մի մեծ ընդարձակ սենեակ մը, որ գեղեցիկ կերպով դարգարուած է քանդակներով ու պատկերներով, դեռ ուրիշ հնութիւններ գտնուած չեն: Հնախոյզների քսածին նայելով սոյն ամբողջ բնեւորների, արձանագրութիւնների մէջ շատ ու շատ քիչ տեղեկութիւններ կան հայոց վերաբերեալ. ընդհակառակն ամբողջն ալ կը վերաբերին գրեթէ Ասորոց ու Բաբելոնացի:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԱԿԱՍՏԱՆԻՑ

Ուրմի, նոյեմբերի 16-ին

Այժմ յայտնի եղաւ ամենքին տեղական դատարարի յետ կանչվելու զլխաւոր պատճառը: Բարանդուզին մօտիկ Գաւու գիւղացի Մամադբէկ անունով քիւրդ աղան սիրահարվում է մի ուրիշ գիւղական աղայի նոր նշանած հարսի վերա, նրան փախցնում է և 4—5 օր հետո ապրում. դատարարին էլ 500 թուման (1000 ռուբլի) կաշառք է տալիս, որպէս զի ընդմիջալ կատարանայ տիրանալ այդ հարսին և ազատ մնայ: Սատարիկ զայրացած այդ բանից, գիւղական աղաները և սէյդիները ժողով են գումարում տեղական մուշտիօրին տանը և մի հեռագիր ուղարկում ուղղակի Եթան, նկարագրելով տեղական դատարարի անտանելի գործերը և խնդրելով նրա պաշտօնականութիւնը Եթան խոտու պահանջում է դատարարից շուտով ճանապարհել թէ՛ հրան, իսկ բողոքողներին պատասխանում է հեռագրով, թէ նրանց խնդրքը կը կատարվի, նոր դատարար շուտով կուղարկվի և հարսը գտնելու համար ոչ մի ջանք չի խնայվի... 200 ձիււոր այժմ որոնում են քիւրդ աղային. թիւրքաց կառավարութեանն էլ աղաբարված է, որ սահմանն անցնելու դէպքում բռնեն...

Մինչև այսօր նոր դատարար չէ եկել Եթան 3 օր շարունակ բանակցութիւնների մէջ է մտել այստեղի մի նշանաւոր անձնաւորութեան հետ, որի անունն է Մաշիկ-Մալթանէ՝ դատարարի պաշտօնն ստանձնելու մասին. բայց նա չէ համաձայնվել, առաջարկել են նոյն իսկ առանց պարգև տալու ստանձնել, բայց դարձեալ Մաշիկ-Մալթանէ հրաժարվել է: Յայտնի է, որ Պարսկաստանում պաշտօն ստանձնելու համար ոչ թէ ռոճիկ են ստանում, այլ խնդրում են առանց ռոճիկի պաշտօն վարել և դեռ մի քանի հազար թուման էլ կաշառք են տալիս, ինչպէս օրինակ, այստեղի նախկին դատարարը՝ Եթանաղան (աղբայագուէ) իր պաշտօնն ստանձնելու համար կաշառք էր տուել 6000 թուման (12,000 ռուբլի):

Զմեռային ցրտերն սկսել են, նոյեմբերի 3-ին, առաւօտեան, առաջին անգամ ձիւն եկաւ:

Վերջին օրերս Գեորգաբաթի հայոց հանդըստարանում մի կնոջ գերեզման են քանդել, շուրքեր և զարդերը հանել՝ դիակը չարտել մի կողմ, պղծելով գերեզմանները: Ոճարարը պարսիկները մնացին անպատիժ...

Պարսկաստանի պատասխանելի վարչութիւնների անհոգութիւնը կատարելապէս զգուել է. ասան չորրորդ շաբաթն է, որ Ռուսաստանից լրագիրներն ստացվում են բողոքովն անկանոն. օրինակ՝ «Մշակ» բաժանորդները, որոնք պէտք է ստացած լինէին 20 համար, ստացել են 3—4 համար. այն է՝ 176, 177, յետոյ 186, 187, յետոյ 191, 192 համարները, իսկ մնացածը չը կայ. անհոգութիւնն այն աստիճանին է հասնում, որ ուղ շուտ է մտնում պատասխան, նա կարողանում է իր ձեռքով վերցնել լրագիրը և տանել, չը նայած, որ ինքը բաժանորդ չէ: Պատասխան պաշտօնաները բողոքն էլ հայել են և նրանց վրա բաւրոյական պարտականութիւն կայ աւելի բարեխիղճ լինել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բ. Գուռ մաքսահարկ դրեց Կրեմէյի Թիւրքիա բերվող բոլոր ապրանքների վրա, չը նայելով որ այդ ապրանքների համար մաքսահարկ

